

ՀԻՆ ԴԵՄՔԵՐ

Մ Ի Ն Ա Ս

Գաւիթէի հայկական Լսարանին

Ա.

Գիրքի՞ն է մակղիր մը տալ. — Ժամանակը. — Դարիժեցոյնը ի՞նչ գլուխը. — Ընկղմած մը. — Միմասի մկարչութեան մկարագրականը. — Դարիժեցոյնը և Շարտէմի մշակմանը. — Գիծ մը մեր պատմութեան իմաստասիրութեան. — Հայկական ուսման մը իրանի վարդապետմանը մէջ. — Քուրք-պարսիկ պատերազմ. — Ներուպացի մկարիչ մը ի հալէպ. — Միմասի բժշկական ծանօթութիւնները.

Մինաս՝ լոկ յատուկ անուն մը, դրուած Հին դէպքեր տխրոյն տակ, իրեն հիմակի մը, առջի բերան մտածել պիտի տայ զանձ. ասացի մը, երգչի մը, ո՛ր և է միջակութեան մը վրայ, որ պարզապէս նորութեան համար կը կանչուի ստուերներէն՝ ուր շատ խոր թաղուած էր։ Իր դէմքը յօգուածիս ի գլուխ դրած պահուն իսկ, կ'ուզէի մակղիրով մը, իրբեւ արշալոյսի վարդագոյն հառազայթով մը, լուսաւորել զայն, որպէս զի շատ չմեղադրուիմ երբ հատուածիս ընթացքին մէջ զայն զափնինքով պսակեմ։ Կրնայի ըսել Միմաս Նոր Զուրաբի, Միմաս վարդապետ, Միմաս մկարիչ... Բայց կը վախէի մի՞ գուցէ ընթերցողներն այն բոլորն ալ աւերելով՝ իրենց նախկին խանդավառութեան ձայնարկութիւններուն մէջ գոչէին նաեւ Հոյ Ռաֆայէլը՝ նախընթաց մը Ալվազովսկիներու և Էտկար Շահիններու։

Որատիտ կ'ըսէ թէ Հոմերոս ալ երբեմն իր աստուածներուն պէս կը քնանայ. ուրեմն ինչ զարմանք երբ հանձարներն ու կայսրութիւններն ալ մոռացութեան մէջ կը քնանան կամ չեն հասկցուիր։ Իրաւ որ ամէն բանի ժամանակ կայ, Հիտիտներուն ալ, Շէքսպիրին ալ, Քուլաքին ու Մինասին ալ։

Մարդ կը սպասէր որ Մինասին վրայ բոլոր ժամանակակից ժամանակագիրները իրենց յատուկ ոճովը խօսէին, զատելով Առաքել Դարբիժեցիին մէկ կտորէն՝ ուր անոր աստուածացումը քնարերգուած է. Բայց ամէնքն ալ կը կեղծեն անոր վրայ բան մը չգիտնալ. լռութիւնը քիչ մը զայթակեցուցիչ և առեղծուածական համեմատութիւններ կ'առնէ։ Առաքելի պատմութեան ի՞նչ, գլուխն իսկ՝ ուր խօսուած է Մինասի վրայ, պակասաւոր է Ոսկանի տպագրութեան մէջ, որ հեղինակին մահահանգն հագիւ երեք չորս տարի վերջ լոյս կը տեսնէր։ Զարմանալին այն է որ պակասը կը սկսի ճիշդ անկից՝ ուր պէտք էր սկսիլ Մինասի դէմքը ստուերագրել։ Դեռ աւելին կայ։ Վիեննայի Միխիլարեանց ձեռագիրներուն 137 թիւը Առաքելի պատմութիւնն է, զոր գրած է Աւետիս ոմն երէց 1665 տարւոյն, « հրամանաւ և հսկողութեամբ բուն հեղինակին »։ Արդ կը ծանուցուի թէ Մինասի մասը գիծերով նշանակուած է իրբեւ աւելորդ՝, Թերեւս Էջմիածնի ձեռագիրներուն մէջ ալ Մինաս փակագծի մէջ առնուած ըլլայ իրբեւ աւելորդ, որուն բարեբախտաբար ուշ չգնելով վաղարշապատի հրատարակիչը, մեր անցելոյն մեծագոյն աթիւնստագէտը ազատած է... ոչ թէ մոռացութեան՝ այլ մեռնելէ. ուրիշ ոչ ոք որովհետեւ՝ ոչ մէկ տեղ արժանի չէ համարած նոյն իսկ հարեանցի ականարկ մը տալ անոր վրէժին ու գոյներուն։ Թերեւս Առաքելի պէս բազմահմուտ ու լուսաւոր միտք մը պէտք էր որպէս զի համարձակէր նայիլ անոր որմանը կարներուն և ըմբռնել անոնց ոգին, որոնց կենդանի մեղկութիւնը զայթակալական էր անվարժ աչքերու։ Ասկէ զատ Մինաս իր բոլոր տաղանդը Սպահանի մէջ սպառելով՝ թաղուած է իրանի վարդերուն տակ։ Զուրայի գաղութէն դուրս՝ մնացեալ հայութիւնը չէր գիտեր ինչ բանի վրայ զարմանալ անձի մը՝ որուն թերեւս միայն ա-

նունը հասած էր իրենց հեռաւոր ու անուշ երգի մը պէս։ Աւելին՝ Մինաս աշխարհական մըն է և մեր հին գրողները միշտ քիչ մը ընդ ակամբ նայած են աշխարհական տարականներուն։ Նոյն իսկ Առաքել տեսէք ինչ շեշտով յառաջարան մը կը ըինէ Մինասին՝ որուն վրայ թէն ցի կընար զսպել ինքզինք հիանալէ։ «Այլ և պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս ոչ զանց առնել և այլովք եւս շնորհալից արամբք, քեպետես եւս աշխարհակոթք, այլ զի եւս հասարցով քրիստոնէսայք և յազգէս Հայոց, որք են պարծանք և օգուտ մերում ազգի, որոց անուանքն են վարպետ Մինաս և վարպետ Յակոբջան, և են սոքա երկուցն ի ցեղէն Զուղայեցոց»։ Վարպետ Յակոբջան՝ Մինասին հետը յիշուած, արդեօք արուեստակից մը, բարեկամ մըն էր անոր, որուն հայրենակիցն ու դարակիցն ալ եղած է։ չենք գիտեր, խեղճը ժամանակին մէջ ընկզմած է թողով ջրերուն երես տարտամ անուն մը՝ որ Մինասին կառչած կը ծփայ։

Յոգնած Մինասի անշնորթեան պատմութիւնն ընելէ՝ աւելի դիւրին պիտի ըլլայ մեզի իր փառքի գիւցազնեղբորթիւնը գրել։ Ուրեմն Մինաս նկարիչ մըն է եղած, ոչ անոնցմէ որոնց արտադրութիւնները ձեռագիրներու մէջ կը տեսնենք, այլ նկարիչ մը արդի իմաստով, կամ ինչպէս որ կ'ըմբռնէին վերածնութեան դարերուն։ Իր նկարները ներկայացուցած իրքն միայն մէկ հեռաւոր գաղափարը չէ որ կ'արթնցնեն դիտողին մտքին մէջ։ Իր անձինքը միւս և արիւն ունին, կ'ապրին, կը շարժին, կը խօսին, կը ծիծաղին, կը յուզեն ու կը յուզուին։ Իր արուեստին մէջ արուեստագէտ մըն է նա, վարպետ մը։

Մինասի պատկերները, որ մեծաւ մասամբ որմանկարներ են եղած, մեզի չեն հասած։ Գաղափարը զոր իր վրայ կազմեցինք ու արտայայտեցինք, հաստատուած է ականատեսներու վկայութեանց վրայ։ Առաքել Դաւրիթեցիին, Թերեւս տարակուսի տակ ձգուի Առաքելի ճաշակը, Թերեւս իր գնահատութիւնը շարունակութիւն հա-

մարուի անիմաստ և միամիտ զարմացականներուն, որով միայն վարժած են ջրն նաղատել երեւոյթները առհասարակ մեր բոլոր հին գրողները, իայց Առաքել կազմակերպուած ու լայն միտք մ'ունենալէ դուրս, Մինասի նկարներն այնչափ հիանալի են եղած, որ իրեն իսկ գտնել տուած են ճշմարիտ քննադատական ուղղութիւնը։ Փոխանակ յափշտակուած ձայնաքաղու թիանց, անիկայ կը ներկայացնէ Մինասի պատկերներն այնպէս՝ ինչպէս որ են, այն նորութիւնները զորս այս արուեստագէտը բերաւ Արեւելքի նկարչութեան մէջ, դրպոցը՝ զոր հիմնեց։ Դաստաստանը բոլոր դարերուն թողած է. և իր ուշադրութեան առած կէտերը ամենէն խիստ քննադատի ճաշակն ալ կը գոհացնեն։ Այսուհանդերձ թէ՛ Առաքելի ճաշակը շատ վստահելի չնկատուի, ոչ որ սակայն պիտի համարձակի ժխտել զայն Շարտէնի։ Բազմահմուտ Ֆրանսացի ուղեւորս, որ տեսած էր ինչ որ Ռամպրանդ ու վան Տիք, Լէոնարտոյ Դա Վինչի ու Թիցիանոյ, Լըպրէօն ու Ռիւբէնս հրաշքեղբորներ արտադրած էին, իր երկարամայա թափառումներովն յԱրեւելս և քնակութեանքն ի Սպահան, ուր շատ խոր ծանօթութիւններ կը ստանայ երկրին բարբերուն, վարչական դրութեան, արուեստից և գիտութեանց, չի կընար իր հիացումը զսպել Մինասի որմանկարներուն հանդէպ մինչ ի վեր կը հանէ պարսիկ նկարչութեան մեծամեծ թերութիւնները։ Շարտէն, ժամանակակից Մինասի, յանուանէ չի յիշեր զինքը, բայց այն պալատները որոնց որմանկարները ախորժեկի տպաւորութիւն մը թողած են իր վրայ, առանց ո՛ր և է տարակուսի Մինասի գործերն են, ինչպէս կը տեսնուի Առաքելի ըսածներն Շարտէնի տուած տեղեկութեանց հետ համեմատելով։

Ոչինչ կայ զարմանալու կամ անհաւատ գտնուելու երբ ի նկատի առնենք որ ամբողջ այն միջավայրը ուր ապրեցաւ Մինաս, ձեռնառու եղաւ զինքը մեծ արուեստագէտ մը կազմելու։

Մեր ամբողջ պատմութեան իմաստա-

սիրութենէն ապացոյցուած տխուր ճշմարտութիւն մըն է թէ մենք հայերս մեծ հնր, տաղանդաւոր ենք, երբեմն նաեւ հանճար ... բայց օտարներու ձեռքին տակ Որովհետեւ բնութիւնը՝ որ այնքան գեղեցիկ ձիւրքեր շոյալեց մեր գեղին, զաջաս միակեր է հակասեր, որ միայն կը յաջողցնէ ընկերութեան մը ձկտումները, այսինքն է դիւանագիտական, վարչական, կազմակերպութեան ոգին, համատու՝ հրամայելու և հնազանդելու միտքը: Որով անկարող ինքն իրեն նպաստաւոր միջավայր մը ստեղծելու, երբ օտար երկրի մը մէջ պատրաստ հողը կը գտնէ, կը քաշէ իր ամբողջ պարթեական հասակը, կ'առնէ բնածին համատուրութիւնները, և կը ցուցադրէ կարողութիւնները: Եթէ անիկայ Բիւզանդիոն կ'երթայ կայսր ըլլալու, Պարսկաստանի մէջ ամենէն մեծ վաճառականը պիտի ըլլայ:

Այն կեանքը՝ զոր Հին Ջուղայի բնակիչներն ունեցան Պարսկաստանի մէջ, ամենէն փառաւոր ու ամենէն ընդարձակ էջերէն մէկն է ուր մեր ցեղին առեւտրական կարողութեան մեծագոյն ապացոյցը գրուած է: Իրենց գաղթելու տարիէն, 1605, մինչեւ Շահ Աբասի մահը, 1628, մինչեւ Շահ Ալեքի մահը, մինչեւ Աբաս երկրորդի թագաւորութիւնը, 1641-1666, լիութեան, առատութեան, պարարտութեան տարիներ են, ինչպէս պիտի ըսէր Բուզանդ: Շահ Աբաս, բոլորովին քանապաշտ՝ ըստ Նէշիդէի դատումին, և ամենէն մեծ միտքերէն մէկը որ երբեք երեւցած ըլլայ Արեւելք, իր ծայրայեղ անգիտութեանց հետ ունենալով և ծայրայեղ գիշողութիւններ, ըստանի ընելու համար այն նոր օղջ այս զաղութին, զոր կարելու կը դատէր իր տէրութեան զարգաց-

ման, բարութեան ոչ մէկ տեսակը մոռցաւ: Շատ տարիներ տուրքերէ ազատ ըլլալ զանազաններուն. մտածեց նոյն իսկ իջմիածնի հողի ու քարերը Սպահան փոխադրել՝ իրենց սիրտերը անոր հիմունքներուն հետ հոն հաստատելու համար: Իրենց ընդարձակ հողեր կու տայ ձրի ուր պիտի շինեն եկեղեցիներ, մենաստաններ, պալատներ, վաճառափողոցներ, խաներ, ամրոց ըզրաք մը, Սպահանի կարեւորագոյն արուարձանը՝ զոր փափուկ վերլիշումով մը Ջուղա կ'անուանեն: Շահ ստէպիրենց պարթեական կու գայ, նոյն իսկ եկեղեցւոյ մէջ կը մասնակցի իրենց կրօնական հանդէսներուն, մեծամեծներուն ազատ մուտք կը թողու արքունիքը և կը խրախուսէ վաճառականութեան մէջ, իւր ահա անոնք կը տարածուին Հնդկաստանէն մինչեւ Վենետիկ, փոխադրելով գոհարեղէններ, կերպարանք, բարքեր և սովորութիւններ: Քիչ ատենուան մէջ վաղ ունէն աւելի վաճառականներ հրապարակի վրայ իւրաքանչիւր հինգհարիւր հազարէն մինչեւ երկու միլիոն թուման կը խաղցնեն, որոնք դրամին այն ժամանակներ ունեցած յարգն ի նկատի առնելով, պզտիկ Ռուբլիներ և Ռոնքֆէլլոններ են: Բարօրութիւնը ծայրահասած է լիապատար. և այլ եւս ուրիշ բանի վրայ չեն մտածեր՝ բայց եթէ կեանքը դիւրեցնել, զարդարել, քաղցրացնել, ճաշակին կը նրբանայ. ճիշդ մ'ունին իրենց բնակարանները ոչ միայն հանգիստ այլ և գեղեցիկ ընելու. զանոնք նկարներով կը զուարթացնեն, վայելուչ դրախտներով կը շրջապատեն, ամրոց Ջուղան ուլախս մը կը դարձնեն նոյն իսկ Խրանի պարդաստաններուն մէջ: Կը ծնանի արուեստի պէտքը և այս պատրաստուած միջավայ-

1. Շարէն, Ուղեւորութիւն Շատ. Գ. էջ 26 ապ. 1728.

2. Ե. Ենեցեցի (Ջուղայիցի) գլարկ և զբնակութեան ինքնաջ հրաշալի յօրինածովք, կամարակալ փողոցօք, Թեւաւոր ապարանօք և ամարաստուն հովանոցօք, բարձրաբարձ և արցայակերպ շինածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղկեալ ոսկւոյ և լալվարդի և պէսպէս երան-

գաց ակնախաղաղ ստեղծաց, Սոյնպէս շինեցին և զեկեղեցիս հրաշալի յօրինածովք ըստ արքանոյն փառացն Աստուծոյ երկնաման խորանօք, և գերաժքարձ կաթողեկիւք. բովանդակ ծաղկեալ պէսպէս երանովք ոսկւով և լալվարով, տնօրինականօք Տնտն և պատկերօք սրբօք: Առաք. Գալիթի, զուրի Ե.

րին մէջ կը ծնանի միանգամայն իր մեծագոյն արուեստագէտը, Մինաս:

Մինասի կենաց մանրամասն նկարագրութիւն մը չունինք. չենք կրնար քայլ առ քայլ հետեւիլ իր տաղանդին զարգացման. մեծ ուստուֆնեբով ստիպուած ենք զինք իր գործին վրայ տեսնել, իր արդէն կազմակերպուած վիճակին մէջ:

Եթեմեկտաններորդ դարու սկիզբները Զուգա ծնանկով՝ ուրիշ բան տեսած պիտի չըլլայ, բայց եթէ ճամբաներ որ կը կտրեն և ծառերով կը զարդարեն, յատուկագիծներ որ կը ձևեն տուններ բարձրացնելու համար, նկարիչներ որ գրազած են զանոնք պնդազարդելու. այս ամբողջը արթնցուցած պիտի ըլլայ իր մէջ արուեստներու սէրը, և բերումը՝ նկարչութեան գնացքը է: Բախտ ունեցաւ այս արուեստին մէջ ~~գործը~~ վարպետ մ'ունենալու որ այնքան փառաւոր կերպով զարգացուց իր բնական փառաւոր ձիրքերը: Յամին 1624 Բաղտատու դաշտերը պարսկական բանակներով կ'ողողոտին, որոնք իրենց գոյնզգոյն վրաններով զայն տարօրինակ կերպով կը ծաղկեցնեն: Շահ Աբասն է՝ եկած իր մէկ քմահաճոյքը իրացնելու, Ոսմիա տեանց հռչակաւոր ու շոյլ մայրաքաղաքին տիրելու: Երբ շահը կը քայլէ, հեղին է որ կ'ընթանայ. ետեւէն ամբողջ աշխարհներ կը քաշէ կը տանի: Ուրիշ պատճառ չգտնելով Մինասին ի Սիւրիա գտնուելուն իր մանուկ հասակին մէջ, կարծեմ որ այս հեղեղը զինքն ալ առեր տարեր է: Թերեւս հայրը պաշտօն մ'ունէր բանակին մէջ, թերեւս՝ ճարտար վաճառական, իր ծրագրիներն ու հաշիւներն ունէր. թերեւս աւելի որոշ խօսք մը չենք կրնար ըսել: Մուրատ չորրորդ՝ իր գահակալութեան հետ լուր կ'առնէ միանգամայն որ շահը Բաղտատի տիրած է: Աբաս պարսկի իշխանութիւնը կը հաստատէ քաղաքին մէջ ու կը դառնայ Սպահան վատ-

նելու իր ամբողջ հարստութիւնները և նոր ամառաստաններ կանգնելու: Մինաս Հալէպ կը ֆալ որպէս զի արուեստը սովորի նկարչութեան՝ զանոնք զարդարելու համար:

Այս քաղաքին մէջ եւրոպացի պատեկաբաններ մը կը գտնէ և անոր կ'աշակերտի: Իր մեծութիւնը այս անձանօթ եւրոպացիին կը պարտի: Անգղիացի՝ մըն էր, Ֆրանսացի՝ մը, հոլլանտացի մը, ես կը սիրեմ որ իտալացի ըլլայ և վենետիկցի մը: Հնախոյզ մը, Բերդէ, դիւանը զբաղարկած է այն յարաբերութեանց, որ ունեցած են վենետիկցի հիւպատները Սիւրիոյ մէջ: Հոն կը տեսնուի որ Ադրիականի զէլոյն վեշտասաններորդ դարէն սկսեալ իր անընդհատ հիւպատներն ունի Հալէպի մէջ որ ուշադիր են քաղաքական շարժումներու, առեւտրական մրցակցութեանց, ընկերական բարքերուն և պատմական հնութեանց, և այս բոլորին վրայ պարբերաբար տեղեկութիւններ կու տան ծերակուտին: Ասոնց պաշտպանութեան տակ կը գործէ, կ'ազդէ և տարածուի կ'ուզէ ամբողջ մը վաճառականներու, քարոզիչներու և հետաքրքրներու: Եթէ իտալացի մըն էր Մինասի վարպետը, հոգին էր ուրեմն որ կը ներշնչեր անոր այն արուեստին՝ որը զազաթնակէտը հասուցեր էին Լէոնարտոյ Դա Վինչի, Ռաֆայէլ, Միքէլ Անճէլոյ, Պ. վերոնացին, Թիցիանոյ, Թիւտորեստոյ, Ճիորճիոնէ, Յ. Բելլինի, Կարպաչիոյ: Ինչ ազգէ ալ համարինք այս վարպետը միշտ ունեցած պիտի ըլլայ գեղարուեստի այն նուրբ ու նորարժանը հաշակը՝ զոր վերածնութիւնը իր երկդարեայ կեանքով Եւրոպայի ամէն կողմ տարածեր էր:

Չենք գիտեր թէ քանի՞ տարի Մինաս աշակերտած է ֆրանկին, ինչպէս կ'անուանէին այն ատեն առհասարակ բոլոր եւրոպացիները. բայց անոր բոլոր ներութեանց թափանցեր էր, այլ եւս ինքն ալ՝ միւս այլ

1. Մենդեան Թուական նշանակուած է՝ բայց հաւանորժն չորջ 1610 ասորայն պիտի ըլլայ. որովհետեւ Զուգայցիք Պարսկաստան կը վարուին 1605ին, իսկ

Մինաս 1630ին արդէն սկսած է իր արուեստը:
2. Berchet, Relazione dei Consoli veneti nella Siria, Torino, 1866.

վարպետ մըն էր. կարծես այս մագիստրոսութիւնը զգացնել ուզած է Առաքել երբ կը գրէ « և յետ ուսանելոյն՝ ինքնագործիս եղել » :

Կենաց ընթացքին մէջ ուրիշ արուեստներ ալ ուսած էր. մեծ հմտութիւն ունէր աստաբանութեան . և ստէպ ի պաշտօնէ բժշկէ մը աւելի կը հասկնար հիւանդութեանց պատճառներն ու կիրքերու ազդեցութիւնը: Գիտէր նաեւ դեղագործութիւնը և մանաւանդ վիրաբուժութեան սպեղանիներ պատրաստելու կերպը: Բայց սիրահար գեղեցիկ ձեւերու՝ այս բոլորը կը գործածէր միայն իր նկարները կատարելազործելու: Բժշկութեան և վիրաբուժութեան արուեստի մէջ իր ունեցած փորձառութիւնը սրած էր իր հոգեբանելու և անդամազննելու կարողութիւնը, ասկից է որ նա իր արուեստին կրցաւ տալ այն մեծ կատարելութիւնը որ շուտով իրեն հիացողներու ընդարձակ շրջանակ մը կազմեց, մտաւ բարձր ընկերութեանց մէջ և տէր եղաւ փառքի ու հարստութեան:

Դառնալով Զուլդ բնակարան Հայոց արուածանին մէջ: Ամէն կողմանէ նորա կառուց տուններ նկարագրադրելու կոչուած, շուտով անուն հանեց իր սկզբնաւորութիւններովն անգամ: Շրջանը ըրաւ բոլոր Զուլդայի մեծամեծներու տուններուն, որոնք կը տանէին « ի ծաղկել և ի պատկերազրել զյարկս ապարանից և տանց իւրեանց, վասն կարի առաւել վայելչակերտ գեղեցկատիպ չքնադատեն յօրինուածոյ արուեստին » : Բայց Շահիխանեց ընտանեաց մէջն էր որ Մինաս առիթ ունեցաւ ազգային շրջանակէն դուրս ելնելու և Սպահանի համազգային ընկերութեան մէջ մտնելու:

Շարայայեղի

Հ. Ն. ԱՌԻՐԻՅԱՆ

« Ա Ռ Ր Ի Յ Ա Ն »

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

— տարեկան գին 12 ֆր. —

Դիմել՝ Rédaction « AKHOURIAN » Alexandropol (Արարատ).

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ՏԻՐԵՐԻՍԻ ՆԱԽԱՎԱՐՆ

(Շարունակութիւն տես էջ 88)

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԿՂՈՂԻՈՍ ՎԱՐՐՈՆ

Իր հարազատ աղջիկը ամբաստանած ըլլալուն ցաւն գերեզմանին դուռը հասուցեր էր Սարգիսը, բայց իր զօրաւոր առողջութիւնն յաղթեց հիւանդութեանը, և տաս օր սաստիկ ջերմէ տանջուելէն վերջ՝ կամաց կամաց աղէկացաւ, թէ և իր բանավարութիւնը դեռ խանգարուած կ'ընէր. միշտ լուակաց, բնաւ չէր խօսիր, կարծես թէ լեզուն բռնուած ըլլար. ոչ կը զանգատէր, ոչ բան մը կ'ուզէր, ոչ կը պատասխանէր իր որպիսութիւնը հարցնողին. և երբ վաղերիաւ կը մօտենար անոր անկողնին՝ նա ձեռքը երկընցնելով ետ կը մղէր զանիկայ, և գլուխը կը ծածկէր սաւանով՝ որպէս զի չտեսնէ:

Հերոնիմոս, Դեկոս և Մելանիա ամէն սիրալիր խնամք կը տանէին հիւանդին վրայ, և գիտնալով որ անիկայ յանցաւոր է՝ չառ կը փափաւ գէին որ առողջանայ, որպէս զի զոչայ իր մեղքերուն վրայ:

Օր մը՝ մինչդեռ Սարգիս կազդուրման վիճակին մէջ կը գտնուէր, Հերոնիմոս նստաւ ծեւունայն քով՝ շոր երեք օրէ ի վեր անկողնէն ելած էր, և սեղմելով անոր ձեռքը՝ ըսաւ անուշիկ ձայնով մը.

— Ինչո՞ւ կը լռես, քու լուութիւնդ կը տրամեցնէ բարեկամներդ. խօսէ՛ որպէս զի միսթարուի խեղճ վաղերիան:

Սարգիս գլուխը խոռարհեցուց կուրծքին վրայ, արցունք մը կաթեցաւ աչքերէն, և յուզուած Հերոնիմոսի բարեսիրտութենէն՝ ընդհատեց իր երկարատեւ լուսթիւնը և վրայ բերաւ.

— Վեհանձն մարդ, ես արժանի չեմ քու զօրութեանդ, և ինծի բարեք ընելովդ աւելի կը նեղես զիս ... Ես ամենէն մեղաւոր մարդն եմ, և չեմ համարձակիր աղջկանս երեսը նայելու, վախճալով որ ըլլայ թէ անոր վրայ կազգամ արհամարհուիմ մը:

— Չարհամարհուիք հայր մը, և վաղերիաւ կու լայ ու կ'ազօթէ քու երջանկութեանդ համար, ըսաւ Հերոնիմոս:

Սարգիս լացաւ սրտամտիկ հեծկտանքով. և այդ ծերունայն լացն կարեկցութիւն կը շարժէր: Ատոր վրայ Հերոնիմոս ալ յուզուեցաւ մինչեւ լալու չափ, և զանիկայ միսթարելու համար՝ վրայ բերաւ ամենայն անուշութեամբ.